

համար, որ տեղի պիտի ունենա «Բազմավեպ»-ի հոբելյանական հանդեսին օրն իսկ:

Կիրակի 19 հոկտ. կեսօրն վերջ Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի շքեղազարդ դահլիճներուն մեջ կսկսն «Բազմավեպ»-ի հարյուրամյակին նվիրված հանդեսը: Սրահը լեցված է հայ և իտալացի ընտրանիով: Հոն են արտասահմանեն հրավիրված ազգայիններ, հրապարակագիրներ, գրադեմոներ, արվեստագետներ և այլն. մեծ մասամբ Մուրատ-Ռաֆայելյան նախկին սաները և թերթերու ներկայացուցիչներ: Հայր Մեսրոպ Ճանալյան, «Բազմավեպ»-ի ներկա խմբագրագետը, կբանա հանդեսը: Ան խոսք կառնեն ու կբացատրեն «Բազմավեպ»-ի նշանակությունը:

Մոնսեններ տը Լյուբա իտալերեն լեզվով ներբողականը ըրավ «Բազմավեպ»-ի ու հայն սնուցանող դարավոր հայ հանձարին:

Բանաստեղծ Հայր Վահան Հովհաննիսյան կուռ ճառով մը վեր հանեց թերթին խոր ազդեցությունը հայ մտավոր շարժումին վրա: Հայր Հ. Ոսկյան «Հանդէս Ամսօրեայ»-ի կողմն հարգանքի ու հիացումի տուրքը բերավ քույր պարբերաթերթին: Իտալացի լը-

Վենետիկ, 1947 հոկտ.

րագրող Ժ. Վեննի իտալական մամուլին ողջույնները բերավ հոբելյանական հանդեսին: Հուզված ու ներշնչված շեշտերով խոսք առավ երիտասարդ բանաստեղծ Արամայիս Մրապյան, նախկին սան Մուրատ-Ռաֆայելյանի, դրվատելու համար հայ մամուլն ու անոր վաստակավոր ու անխոնջ մշակները:

Խնամված դեղարվեստական բաժնին իրենց մասնակցությունը բերած էին Օր. Մադի Պոտուրյան՝ երգ և դաշնակ, Պ. Միրակ Սազրզլյան՝ հայկական երգերով, Պ. Վ. Թոքաճյան՝ արտասանություն և իտալացի արվեստագետ Ս. Ամենտոլա՝ իր դաշնակի ընկերակցությունը:

Հանդեսը փակեց Ս. Ղազարու վանահայր Գեր. Ուլուհաճյան ընդհանուր խանդավառության և երկարատև ջերմ ծափերու մեջ:

Հանդիսականները առիթ ունեցան կից սրահներու մեջ ցուցադրված «Բազմավեպ»-ի հին թե նոր թիվերը թղթատելու և հիանալու համար նույնպես «Գեղունի»-ի ժիւրանափայլ ու շքեղ հատորներուն վրա, զոր Մխիթարյան հայրերը մասնավորապես հրատարակած են փառաբանելու համար «Բազմավեպ»-ի հարյուրամյա հոբելյանը:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃՅԱՆ  
(«Ժողովուրդ» 9 նոյեմբ. 1947 թ.)

ՀԱՅԵՐԸ ՍՈՒՐԻՈՒ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍՈՒՐԻԱ, Ճեզիրիի նահանգը, որ ունի Գամբըլը, Հասիչե, Ռասյուկ-Այն, Տեր-Ձոր, Տերպեսիե ավանները, ընդամենը 12.500 հայ առաքելականներով: Ունի Առաջնորդական փոխանորդություն և ներկայիս Աթոռակալն է Հոգ. Տ. Մեսրոպ վարդ. Բարոյան, նույնպես միաբան Կիլիկիո Կաթողիկոսության և շրջանավարտ Անթիլիասից 1936-ին: Հյուսիսային Սուրիո շրջանին մեջ հայ կաթողիկոսները ևս ունեն Առաջնորդական փոխանորդություն, ուր նստում է Գերապայժառ Զոհրապետն եպիսկոպոս:

ՔԵՍԱՊԻ ԵՎ ԼԱԹԱՔԻՈ ՇՐՋԱՆԸ, որ ունի Լաթաքիա քաղաքը, Քեսապը, Գարտուրանը, Եագուպիեն, Ղընեմիեն, Ճիսը էլ Նդուր, Մեյտան էքպեզ, Թարթուս, Թեյ Ապիատ, Թեյ Քոչեք, Թեյ Պրագ, Տերիք, Ընկզիք ավանները, ընդամենը շուրջ 6250 հայ առաքելականներով:

ԼԻԲԱՆԱՆ.—Հողային ավելի ամփոփ սահմանների մեջ հաստատված, և թեև թվականորեն նվազ հոծ քան Հալեպի հայությունը, բայց տնտեսականորեն և մանավանդ մշա-

կութային ազգային հաստատությանց տեսակետից ամենից կարևոր կեդրոնն է Լիբանանը: Մանավանդ պատերազմի այս վերջին տարիներին շատ հայեր գաղթեցին Հալեպի և Դամասկոսի շրջաններից և թերևս 1945 տարվա վախճանին Լիբանանի հայության թիվը նվազ չէ, քան Հալեպի թեմինը: Ունի եպիսկոպոսանիստ Առաջնորդարան:

Լիբանանի գլխավոր կեդրոնացումներն են հետևյալները.—

ԲԵՅՐՈՒԹ քաղաքը և իր արվարձանները, ուր ապրում են մոտ 60.000 հայեր: Բեյրութի Գետի շրջանը, որ սրանից 20-25 տարի առաջ ամայի էր, այսօր երկու կողմի վրա շենցած հայկական թաղերով կցված է ըուն Բեյրութ քաղաքին: Մանավանդ դեռից մյուս կողմը, զուտ հայկական թաղերով է շենցված: Այս հայկական արվարձանների գլխավորներն են,—Գետից դեպի Բեյրութ և քաղաքին անմիջապես կից, Նոր Հաճըն, Էշրեֆիե, Հայաշեն, Բըմեյլ, իսկ դեպի մյուս կողմը մեծազույն արվարձաններն են՝

Նոր Մարաշ, Նոր Սիւ, Նոր Ատանա, Թրատ, Ամանոս և այլն:

ԼԵՌՆԱՅԻՆ ԼԻՌԱՆԱՆ, որ իր մեջ հաշվում է մեկ կողմից Անթիլիասը, Ճյունին, Ճիպելը, Ղազիրը, Պիքֆայան, իսկ մյուս կողմից Ալեյը և Համմանան, ընդամենը ունենալով շուրջ 1500 հայութիւն:

ՊԵՐՍԱՅԻ ԼԵՌՆԱԴԱՇՏԻ ՇՐՋԱՆԸ, Լիբանանյան և Անդր-Լիբանանյան լեռների միջև, Դամասկոսի սահմանին մոտեցած վայրերը: Այս շրջանը հետզհետե աճող կարևորություն է դառնում, նախ այնտեղ ձեռնարկվող պետական անտեսական գործերի պատճառով, ապա և Սանջապից գաղթած հայերի կարևորագույն մասի Այնճար տեղավորվելով՝ նույն Պեքաայի դաշտի դեպի Դամասկոս երկարող ծայրի վրա: Պեքաայի հայկական համախմբումը բաժանվում է երեք-չորս կեդրոնացումների: Նախ Զահլե, որ մեծ պատերազմից ի վեր հայ գաղթականության կեդրոն եղավ, ապա Պապլախ ու Բալազ, իբրև կեդրոններ երկրագործական աշխատանքների և վերջին տարիներին երկաթուղային պետական աշխատանքների: Ավելի կարևոր է Շրորայի շրջանը, Բելյուսից Դամասկոս երկարող պողոտայի ճիշտ Պեքաա դաշտի մուտքի վրա, Այստեղ հայկական մի նոր ավան է աճել, հող են գննել և տուն ու պարտեզ են շինել հայերը. Շթորայի այս շրջանի մեջ կան շատ ավետարանական հայեր, իրենց հատուկ դպրոցով ու եկեղեցիով:

Պեքաայի կարևորագույն հայկական կեդրոնացումն է նորահաստատ հայկական Այնճար գաղթականայնը, Բելյուսից Դամասկոս գնացող ճանապարհի զրեթն կեսի վրա, Բելյուսից 55 կիլոմետր հեռավորությամբ: 1800 հեքտար հող է հայկական Այնճարը, որ Մուսա լիւ է կոչվում: Հողի 92 հեքթարը հատկացված է գաղթականի շինության: Այստեղ նստել է նախկին Մուսա կերան ժողովուրդը. Բիթիսս, Հաջի Հաբիբի, Յողուն, Օլուզ, Խըտըր Պեկ, Վազրք և Քեպուսի, ընդամենը մոտ 5500 անձ: Վերջին տարին, Հ. Բ. Ղ. Միության ձեռնարկով և Հայ Կարմիր Խաչի գործակցությամբ հաստատվեց ջրհան մի մեքենա, հայկական ամբողջ գաղթականին ջուր հայթայթելու:

Համար: Իրենց հաստատումից ի վեր թեև բավական նեղություններ կրեցին Այնճարի հայերը, բայց հեռզհեռ բարեկամվում է տնտեսական վիճակը, երկրագործության աճումով և ճարտարարվեստական նոր գործերի հաստատումով Պեքաայի շրջանի մեջ: Լիբանանի թեմի կարևոր մի մասը դարձել է նաև Հարավային Լիբանանի շրջանը, մեզը հաշվելով Սուր և Սալտա հայկական նոր դաղթականներ: Սուրի և շրջակայքի մեջ տեղավորված են Սանջապից գաղթած բնակիչները, հախկին Այնբասարեթի, Բելյանի, Սովուզ-Օլուզի, Ֆարթալլի, Նարկիզլիքի և այլ շրջանների, ընդամենը 2200 հողի: Այնճար ծովից 55 կիլոմետր հեռու և 900 մետր բարձր է, իսկ Սուր գտնվում է ճիշտ ծովազերքը, Լիբանանի և Պաղեստինի սահմանագլուխի մոտ: Շրջապատված է գլխավորապես իսլամ և Տուրքի ժողովուրդներով: Երկրագործական բերրի մի շրջան է, ունի իրեն հատուկ վազող ջուրը՝ ոռոգումի համար: Հայերն այստեղ սկսեցին աճեցնել փոքրիկ պարտեզներ: Սուրի հայ գաղթականությունը երեք մասերի է բաժանված: Նախ Սուր քաղաքի մեջ հաստատվածները, ապա Բելյուսից Հայֆա դաջող ճանապարհի վրա Պաս կոչված կայանը, և երրորդ, այս վերջինիցս շորս կիլոմետր հեռու և պողոտայից ներս, մի բլուրի վրա, Բաշիախ կամ Բաս-յուլ Այն կոչված վայրը:

Սանջակից Լիբանան հաստատվող հայերի համար, թե Այնճարի և թե Սուրի շրջանները, հողերը գնեց և վրան տուներ շինեց ֆրանսական կառավարությունը: Թեև Սուրի հողերը վերջնահանապես հայերին չէին տրված, բայց լիբանանյան նոր կառավարությունը շնորհեց այդ բաժինն էլ:

ԴԱՄԱՍԿՈՍ.—Հնազույն ժամանակներից ի վեր Դամասկոսը եղել է հայության կայան: Դեպի Նրուսաղեմ գնացող ուխտավորների այնտեղ գտնում էին մի «հոգեհուն»։ Քաղաքի սուրբ Սարգիս եկեղեցին, արևելյան պարսպի ճիշտ կից, իր շուրջ հավաքել է հայ գաղթականությունը: Մեծ պատերազմին, Դամասկոս ամենից ապահով և աննդառատ քաղաքն էր հայ տեղահան ժողովրդի համար:

ԲՅՈՒԶԱՆԻ ԵՂՅԱՆ  
«Արևմուտք»

**ՀԱՅԵՐԸ ԷԼԱԶԻԶԻ ՄԵՉ**

Տիրապաբերն կզրին «Ժամանակ»-ին, թե տեղվույն Առաջնորդը վերջերս այցելած է էլազիդ, ուր բավական մեծ թիվով հայություն կա հավաքված քիչ մը ամեն կողմե և այն-

տեղի ասորիներու հին մատրան մեջ Ս. Պատարագ մատուցած և քարոզած է խուսն բազմության մը ներկայության, որոնցմէ շատեր կարտասվին: Առաջնորդ Տ. Հայրը